Հայաստանը ՄՀՄԻ անդամ

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի 1992 թ. մարտի 17-18 տեղի ունեցած նիստի որոշման համաձայն Հայաստանի Հանրապետությունը դարձել է նշված ինստիտուտի անդամ - պետություն:

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի աշխատանքային մարմիններում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչն է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը (նշանակվել է ՀՀ վարչապետի 2020 թ. հունիսի 30-ի N 759 - Ա որոշմամբ):

Որպես ՄՀՄԻ անդամ - պետություն՝ Հայաստանի ներդրումն ինստիտուտի բյուջեում 2008 թ.- ին կազմել է 69.9 հզր ԱՄՆ դոլլար: Տարեկան կտրվածքով կարճաժամկետ և երկարաժամկետ պայմանագրային հիմունքներով Հայաստանից ՄՀՄԻ են գործուղվում շուրջ երկու տասնյակ գիտաշխատողներ:

Որպես անդամ պետություն՝ ՀՀ-ում ստեղծվել է ՄՀՄԻ հետ համագործակցությունը համակարգող հանձնաժողով՝ Գիտության պետական կոմիտեի նախագահի գլխավորությամբ: